




ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Անցնող Յունիս և Յուլիս ամիսներուն, հետաւոր Մինսքի (Պետրոսիայի մայրաքաղաք) և Միացեալ Նահանգներու Թէքսաս նահանգի Եուսթեն քաղաքի մէջ կայացած Էկումենիկ համաժողովները, առիթները ընծայեցին՝ ստորև մեր վերլուծական համառօտ մտածումներուն:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը, որուն ծիրին մէջ կը մտնեն քրիստոնէայ եկեղեցիներու մեծ մասը, ենթահողը հանդիսացաւ այս համաժողովներուն, որոնց նիստերուն՝ զուտ քրիստոնէաբարոյական ու միջեկեղեցական յարաբերութիւններուն կերպընթացը ծրագրելէ զատ, իրենց օրակարգերուն վրայ կ'ունենան նաև քաղաքա-ընկերային հարցեր (ոմանք՝ հրատապ), որոնց մասին ևս ունին՝ որոշումներ առնելու և զանոնք հետապնդելու պարտականութիւնը: Օրինակ մը միայն.— լիբանանցի արաբն ու պաղեստինցի գաղթականը, կորեացին ու Հապէշիստանի սննդագորկները, կամ հայերն ու կիպրացին, յույները, կը տանին իրենց ցավերը և կը յանձնեն այդ ատենանի խղճմտանքին, հաւատալով, որ արդարութեան ձայն մը պիտի լսուի անկէ:

Լեզվացեղային իրերամերժ, ընդդիմութիւններու այս ժամանակաշրջանին Եկեղեցիներու համախմբումը՝ **միակ խորհուրդի** մը մէջ, ունի իր բազմերես բարիքները: Հակաքրիստոնէական գաղափարախօսութիւններ և մոլեռանդ հոսանքներ, հրամայական կ'ընեն այսպիսի **խորհուրդի**

մը գոյատուր: Քրիստոնէական եկեղեցին արդարև, կարիքը ունի պատասպարուելու միացեալ ճակատի մը ապահովութեան ետին: Զօրաւոր, բազմանդամ և պետական պաշտպանութիւն ունեցող եկեղեցական հարանուանութիւններ, և անոնց կողքին՝ փոքրիկ, թուով քիչ, և պետական հովանավորութիւն չունեցող եկեղեցիներ, լայնօրէն կ'օգտուին ընծայուած բարիքներէն:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը ուրեմն հաւաք մըն է, ուր քրիստոնէական հարանուանութիւններ կը համախմբուին վիճարկելու՝ հանրային շահեկանութիւն ունեցող հարցեր: Հիմնական կարևորութիւն ունեցող միջոցառում է ասիկա, որ կը ծառայէ վերացնելու նախապաշար տրամադրութիւններ և մօտեցնելու իրարու մասեր՝ «Քրիստոսի հօտին» մէջ:

Իբրև մին Արևելեան փոքր եկեղեցիներէն, Հայ եկեղեցին նախաձեռնութեամբը Ամենայն Հայոց Հայրապետութեան, անդամ է և կը մասնակցի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին: Համաձայն վերին ցուցմունքներուն, հայ եկեղեցական պատուիրակութիւնները անցնող տասնամեակներուն եռանդագին աշխատանքին լծուած՝ ծանօթացնելու և վիճարկելու ազգային շահեկանութիւն ունեցող խնդիրներ, միջեկեղեցական աշխարհին հետ: Այդ պատուիրակութիւնները, արդար է ըսել, կրցած են արդիւնաւոր զարգացումներ արձանագրել այդ ուղղութեամբ: Պատ-

մականօրէն անկախ և ինքնավար Հայ-Եկեղեցին, շնորհիւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, միջեկեղեցական աշխարհին մէջ ունի իր շօշափելի տեղը, և քաղաքակրօնական պայմաններուն թոյլատրած չափով, Մայր Աթոռէն մինչև Սփիւոքի հեռաւոր թեմերը, ի վիճակի եղած է բնութագրել իր դրական դիմագիծը, յաշտ աշխարհի:

Վերադառնալով Յունիս-Յուլիս համաժողովներուն, մասնավոր գոհունակութեամբ կը յիշատակենք Հայ Եկեղեցոյ պատուիրակութեան ներկայութիւնը՝ մասնակցութեամբ գերաշնորհ Տ. Ներսէս արքեպս. Պօղոսյանի (դիւանապետ՝ Մայր Աթոռ Ա. Էջմիածնի), գերաշնորհ Տ. Արամ արքեպս. Քեշիշեանի (Լիբանանի հայոց առաջնորդ), հոգեշնորհ Տ. Խաժակ վրդ. Պարսամեանի (ամերիկահայոց արևելեան թեմի առաջնորդի փոխանորդ), հոգեշնորհ Տ. Վիգէն վրդ. Ալբազեանի (Ժընէվի հայոց եկեղեցոյ հոգևոր հովիւ, և հայրապետական մնայուն ներկայացուցիչ և յաշտ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, ի Ժընէվ), և հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաճարեանի (հովիւ՝ Էլպրօնի հայ եկեղեցոյ. Ն. Ճ.): Կորովի, հայրենասէր, երիտասարդ, և իրենց ըսելիքներուն ծանօթութեամբը զինուած պատգամաւորներ, Մինսքի և Եուսթընի ժողովներուն,

բարձրացած են՝ ներկայացնելու Ապրիլ 24 1915-ի ցեղասպանութեան ճանաչումը, Ղարաբաղ-Արցախ վեճին այժմեականութիւնը, թրքական բռնագրաւումներէն՝ հայկական հողերու պահանջքը, երկու հազարէ աւելի հայ սրբավայրերէն կանգուն մնացածներուն պահպանումը, և ուրիշ առնչակից պահանջքներ:

Ուշագրաւ են Խաժակ և Վիգէն վարդապետներուն, առանձնաբար ներկայացուած յուշագրերը: Նպատակը անոնց. — տեղեակ պահել աշխարհը՝ հայ պահանջներուն մասին. շեշտել՝ անոնց կարևորութիւնն ու նշանակութիւնը հայ պատմութեան մէջ, և բացայայտել՝ հայ ժողովուրդին հետապնդող վճռականութիւնը իր պահանջներուն նկատմամբ:

Հայ Եկեղեցին տէրը եղած է և տակաւին կը շարունակէ ըլլալ հայ ժողովուրդին ու անոր ճակատագրին: Անոր հոգևոր որդիները զինուած արդիական զենքերով, արժանաւորապէս ներկայացուցած են և կը ներկայացնեն իրենց Մայր Եկեղեցին միջազգային ու միջեկեղեցական հաւաքներու մէջ, պաշտպանելով անոր՝ իրաւունքները և յայտարարելով անոր՝ անվիճելի դարաւոր անկախութիւնը, 1700 տարիներէ ի վեր, անընդմիջաբար:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

